(ՏԱՍՍ) | սը, որի առաջին բեմադրությունը, ՍՍՀՄ ժողովրդական ար-

«Խաթաբալա» կատակերգության

ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

ՄՈՍԿՎԱ, 19 հոկտեմբերի (Արմենպրեսի հատուկ թղթ. Վ. Սանթրյան): Կերպարվեստի երկրպագուները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունների ցուցահանդեսին, որը հոկտեմբերի 18-ին բացվեց ՍՍՀՄ նկարիչների միությանտանը: Դիմելով ներկաներին, ՍՍՀՄ նկարիչների միության վարչության առաջին քարտուղար, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Սովետական Միության ժողովրդական նկարիչ Թ. Սալախովն ասաց.

— Այս օրերին նշվում է հայ ժողովրդի կյանքի նշանակալից իրադարձություններից մեկը՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը: Տոնական այդ մեծ շղթայի օղակներից մեկը երիտասարդ տաղանդավոր նկարչի ստեղծագործությունների ներկա ցուցահանդեսն է, մի արվեստագետի, որի աշխատանքները բազմիցս ներկայացվել են ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում, հեղինակին բերելով մի շարք մրցանակներ ու դիպլոմներ: Ռուդոլֆ Խաչատրյանի գործերը աչքի են ընկնում մարդու հոգեկան ներաշխարհի նուրբ ընկալմամբ, կատարման բարձր վարպետությամբ ու պատասխանատվությամբ:

Իրենց ելույթներում արվեստագետի աշխատանքները բարձր գնահատեցին նաև Հայաստանի նկարիչների միության վարչության նախագահ, հանրապետության ժողովրդական նկարիչ Ս. Սաֆարյանը, ՌՍՖՍՀ նկարիչների միության վարչության նախագահ, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Ռուսաստանի Ֆեդերացիայի ժողովրդական նկարիչ Ս. Տկաչովը:

Այնուհետև շնորհակալական խոսք ասաց Ռ. Խաչատրյանը:

ՍՍՀՄ նկարիչների միությանը երեք սրահներում ներկայացված են հիսունից ավելի գրաֆիկական դիմանկարներ, որոնք հեղինակն ստեղծել է վերջին վեց տարիներին: Դրանցից են դաշնակահարուհի Լեքսո Թորաձեի, արվեստաբան Հենրիխ Իգիթյանի, կինոռեժիսոր Ցվեյցերի դիմանկարները, ինքնադիմանկարը և այլ գործեր:

Ռ. Խաչատրյանի ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀԿԿ Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Գ. Առաքելյանը, Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրի առաջին տեղակալ Մ. Խարազյանը, անվանի կերպարվեստագետներ, գրողներ, թատրոնի և կինոյի գործիչներ:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՒՄ

ՊՐԱԳԱ, 19 հոկտեմբերի (ՏԱՍՍ): Չեխոսլովակիայի Կոմկուսի Կենտկոմի հրավերով Չեխոսլովակիայում գտնվող ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր կուսակցական վերահսկողության կոմիտեի պատվիրակությունը, որը գլխավորում է ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղարի անդամ, կուսակցական վերահսկողության կոմիտեի նախագահ Ա. Յա. Պելշեն, այսօր այցելեց Հյուսիսային Չեխիայի մարզը: Պատվիրակության անդամները զրույց ունեցան մարզկոմի ղեկավարների և մարզային վերահսկիչ-վերատուգիչ հանձնաժողովի անդամների հետ: Զրույցի ընթացքում քննարկվեցին կուսակցական վերահսկողության բնագավառում երկու կուսակցությունների պրոբլեմները և փորձը:

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՊՐԱԳԱ, 20 հոկտեմբերի (ՏԱՍՍ): Չեխոսլովակիայի Կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՉՍՍՀ պրեզիդենտ Գ. Հուսակը այսօր Պրագայի Գրադում ընդունեց Չեխոսլովակիայի Սոցիալիստական Միության Կենտրոնական Կոմիտեի նախագահ Ս. Ֆրանկին: Զրուցելով Ֆրանկի հետ, Գ. Հուսակը նշեց, որ Չեխոսլովակիայի Կոմկուսի Կենտկոմի հրավերը ստացել է Սոցիալիստական Միության Կենտրոնական Կոմիտեի նախագահ Ս. Ֆրանկը: Զրույցի ընթացքում քննարկվեցին կուսակցական-քաղաքական աշխատանքի մի շարք հարցեր, մասնավորապես՝ Չեխոսլովակիայի Կոմկուսի Կենտկոմի հանձնաժողովների գործունեությունը, Սոցիալիստական Միության Կենտրոնական Կոմիտեի գործունեությունը, Սոցիալիստական Միության Կենտրոնական Կոմիտեի ներքին գործերը, Սոցիալիստական Միության Կենտրոնական Կոմիտեի գործունեությունը Ազգային ճակատում